

Ս. ՅԱԿՈՒԻ ԼԵՐՍԷԼ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ-ԲԵՄԱԿԱՆՔ

ԵՉ. 15 Ապրիլ.- Աւագ Հինգշաբթի (Յիշատակ Ընթրեաց): Առաւօտեան ժամերգութեան աւարտին, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ "Կարգ Ապաշխարութեան": Սուրբ Պատարագը Աւագ Սեղանին վրայ մատոյց Լուսարարայեւտ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան, որ կարդաց Ս. Բարսեղ Հայրապետի Ս. Հաղորդութեան ձառը:

- Կէսօրէ ետք, Մայր Տաճարին գոյգ դասերն ալ, "Ունելուայի" արարողութեան աղիթով լեցուած էին օտար բարձրաստիճան հիւրերով, որոնց կարգին Երուսաղէմի քաղաքայեւտ Վսեմ. Թէտի Բօլլէի եւ հիւպատոսներ: Արարողութեան աւարտին, Անկլիիքան Եկեղեցւոյ Քաֆիթի Եպիսկոպոսը Անգիլերէն լեզուով Աւետարան կարդաց: "Ունելուայ"ի տպաւորիչ կարգը կատարեց Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը:

- Ժամ մը ետք Հոգշ. Տ. Անուշաւան Մայրագոյն Վարդապետի գլխաւորութեամբ, թափօրական գնացքով այցելութիւն տրուեցաւ Քրիստոսի գոյգ բանտերուն, Ամնա Քահանայապետի բնակարանին տեղւոյն վրայ կառուցուած Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցիին, եւ Կայիափայ քահանայապետի տան տեղւոյն վրայ կառուցուած Սուրբ Փրկիչ եկեղեցիին: Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեան խօսեցաւ եկեղեցիին անցեալին մասին:

Հոգեհանգիստ կատարուեցաւ Սուրբ Աթոռոյս հանգուցեալ Պատրիարքաց դամբարաններուն վրայ:

- Գիշերը Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ "Կարգ Խաւարման":

Համատարած մութին մէջ, քարոզեց Լուսարարայեւտ Գերշ. Տ. Դաւիթ Արքեպս. Սահակեան, բնաբան ըմտրելով "Յիշեա՛ զիս, Տէր յորժամ գայես արքայութեամբ քով":

Հանդիսապետն էր Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը:

Ուր. 16 Ապրիլ.- Աւագ Ուրբաթ (Յիշատակ Չարչարանաց Խաչելութեան եւ Թաղման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի):

Կէսօրը քիչ անց, Սուրբ Յարութեան վերնամատարան մէջ կատարուեցաւ "Կարգ Խաչելութեան", հանդիսապետն էր Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեան:

Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ, կատարուեցաւ "Թաղման կարգը": Հանդիսապետն էր Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը:

Շր. 17 Ապրիլ.- Աւագ Շաբաթ (Չրագալոյց Ջատկի): Ըստ սովորութեան, առաւօտեան ժամը Յին Սուրբ Յարութեան Տաճարին դուռը բացուեցաւ

մեր կողմէն, բանալին պաշտօնապէս առնուելով Վանքի Աւագ Թարգման Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեանի ձեռքէն:

- Ժամը 11ին Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը, ի գլուխ Միաբանութեան եւ ուխտաւորներու, մուտք գործեց Սուրբ Յարութեան Տաճար:

Յունաց Ամեն. Տ. Տիոտորոս Պատրիարքին հետ Սուրբ Գերեզման մտաւ մեր լուսահանը՝ Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

Հինգ վայրկեան ետք, երբ լոյսը դուրս կու գայ Սուրբ Գերեզմանի պատուհանէն, զուարթօրէն կը սկսին դողանջել Տաճարին բոլոր Յունական եւ Հայկական զանգերն ու կոչնակները: Լուսահան Հայր Սուրբին գլխաւորութեամբ Հայկական թափօրը կը կազմուի, որուն կը հետեւին Ղպտոց եւ Ասորոց թափօրականները: Թափօրը երիցս կը դառնայ Սուրբ Գերեզմանին շուրջ, "Քրիստոս Յարեա՛" երգելով: Ժամը 3.30ին Միաբանութիւնը վանք կը վերադառնայ: Իսկ Սուրբ Յարութիւնը կը մատուցուի քրագալոյցի Ս. Պատարագ: Ժամարարն էր Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Դաւթի Բերդին դիմաց, Պատրիարք Սրբազանը եւ լուսահան Վարդապետը կը զգեստաւորուին եւ Յարութեան շարականներ երգելով թափօրը կը յառաջանայ եւ մուտք կը գործէ Մայր Տաճար, ուր Պատրիարք Սրբազանը յարութեան աւետիսով կ'արձակէ ժողովուրդը:

Ժամ մը ետք, Չրագալոյցի արարողութիւնը կը սկսի ի Սուրբ Յակոբ, որուն աւարտին Հոգշ. Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան կը մատուցանէ Ս. Պատարագը Աւագ Սեղանին վրայ: Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեան նախագահեց Սուրբ Ջատկի նախատեսակին, որուն աւարտին "Այսօր Յարեա՛" շարականը երգելով կը բարձրանան վանքի սեղանատունը՝ օրհնելու եւ ընթրելու:

Կիր. 18 Ապրիլ.- Ջատկի Յարութեան Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի:

- Կէս գիշերը երկու ու կէս ժամ անցած մայրավանքին զանգը կը հնչէ: Գերշ. Տ. Կիրեղ Եպիսկոպոսի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը կը մեկնի Սուրբ Յարութեան Տաճար: Յունաց արարողութեան աւարտին, առաւօտեան ժամերգութիւնը կը շարունակուի Սուրբ Գերեզմանի շուրջ թափօրով եւ հետեւողութեամբ Ղպտոց եւ Ասորոց:

Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեան մատոյց օրուան Պատարագը Քրիստոսի Գերեզմանին վրայ եւ քարոզեց: Արարողութեան կարեւոր մասը ձայնասփռուեցաւ Իսրայէլեան Ռատիօկայանէն: Ներկայ էր Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը: Վանք դարձին, Յարութեան շարականներու

երգեցողութեամբ, Միաբանութիւնը յառաջացաւ
Հայոց Թաղի մուտքէն եւ բարձրացաւ
Պատրիարքարան:

- Կէսօրէ ետք, Մայրավանքի մեծ բակին մէջ
կատարուեցաւ Ջատկական մեծ "Անդաստանը"
հանդիսապետութեամբ Ամենապատիւ Սրբազան
Պատրիարք Հօր: Եւ ապա կատարուեցաւ Երեկոյեան
Ժամերգութիւնը:

Բշ. 19 Ապրիլ.- Յիշատակ Մեռելոց: Ըստ
սովորութեան, Ամենապատիւ Պատրիարք Հայրը
Հանդիսաւոր Ս. Պատարագ մատոյց Մայր Տաճարի
Աւագ Սեղանին վրայ եւ քարոզեց:

Սուրբ Պատարագէն ետք, Նորին
Ամենապատուութիւնը ամպիովանի տակ եւ Սուրբ
Խաչափայտի մասունքն ի ձեռին, նախագահեց
եռադարձ թափօրին:

Վարդապետներ ի ձեռին ունէին Սրբոց
մասունքներ: Երգուեցաւ "Ճանապարհ"ը
ուխտաւորաց համար: Յետոյ բոլորն ալ
Պատրիարքարան բարձրացան, երգելով "Քրիստոս
Յարեալ" շարականը: Սրբազան Պատրիարքը իր
օրհնութեամբ արձակեց ներկաները բաժնելով
Սուրբ Պատարագի նշխար:

Գշ. 20 Ապրիլ.- Մայր Տաճարի Սուրբ
Գլխադրին մէջ պատարագեց Հոգշ. Տ. Բագրատ
Աբդ. Պուրճէֆեան: Գերշ. Տ. Սեւան Եպս. Ղարիպեան
նախագահեց ընդհանուր հոգեհանգիստի
պաշտամունքին:

Եր 24 Ապրիլ.- (78րդ տարեդարձ Ապրիլեան
եղեռնի): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ
հանդիսաւոր Պատարագ մատոյց եւ քարոզեց
Գերշ. Տ. Յուսիկ Եպս. Պաղտասեան: Ապա
կատարուեցաւ Հոգեհանգստեան մասնաւոր պաշտոն՝
մեր բիրաւոր նահատակներու հոգիներուն համար:
Թափօր կազմուեցաւ հանդիսապետութեամբ
Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեանի
եւ հանգստեան շարականներու երգեցողութեամբ,
Հ.Մ.Ը.Մ. եւ Հ.Ե.Մ. սկաւտներու եւ արեւոյշներու
առաջնորդութեամբ, ցեղասպանութիւնը
դատապարտող քառալեզու լոզունքներով եւ
բազմաթիւ ծաղկեպսակներով, ուղղուեցաւ դէպի
Փրկչի գերեզմանատունը եւ բոլորուեցաւ Արարայի
նահատակաց յուշարձանին շուրջը, ուր
կատարուեցաւ հոգեհանգստեան կարգ, որմէ ետք
խօսք առաւ Յակոբ Սեւանը:

Իրիկունը ժառանգաւորաց Սրահին մէջ
տեղի ունեցաւ Ապրիլեան Նահատակաց ոգեկոչման
հանդիսութիւն. նախագահեց եւ փակման խօսքը
կատարեց Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք.
Սահակեան:

Կիր. 25 Ապրիլ.- Նոր Կիրակի (Կրկնագատիկ

Յիշատակ Նահատակաց): Ըստ սովորութեան,
Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց
լուսահան Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

Եր. 1 Մայիս.- Աւետումն Սուրբ Աստուա-
ծածնի: Երեկ յետ միջօրէի նախատօնակին
նախագահեց Գերշ. Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

- Առաւօտուն Գերշ. Տ. Սեւան Եպիսկոպոսի
գլխաւորութեամբ, Միաբան հայրեր ինքնաշարժերով
իջան Գեթսեմանիի ձորը, "Հրաշափառ"ով մուտք
գործեցին Սուրբ Աստուածածնայ Տաճար, ուր
Տիրամօր Գերեզմանին վրայ հանդիսաւորապէս
պատարագեց Գերշ. Հանդիսապետ Սրբազանը:

- Կէսօրէ ետք, Լուսարարապետ Գերշ. Տ.
Դաւիթ Արք. Սահակեանի գլխաւորութեամբ
Միաբանութիւնը "Հրաշափառ"ով մուտք գործեց
Սուրբ Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան
Ժամերգութիւնն ու նախատօնակը մեր
վերնամատրան մէջ: Ապա կատարուեցաւ
Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան
հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն
էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Կիր. 2 Մայիս.- Աշխարհամատրան (Կանաչ
Կիրակի): Գիշերային եւ Առաւօտեան
Ժամերգութիւնները պաշտուեցան ի Սուրբ
Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Ապա,
Լուսարարապետ Դաւիթ Արք. Սահակեան Պատարագ
մատոյց Քրիստոսի Գերեզմանին վրայ եւ քարոզեց
եւ նախագահեց Սրբավայրին առջեւ կատարուած
"Անդաստան"ին:

Եր. 8 Մայիս.- Սուրբ Պատարագը
մատուցուեցաւ ի Սուրբ Գլխադիր: Ժամարարն էր
Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան:

Կիր. 9 Մայիս.- Կարմիր Կիրակի: Սուրբ
Պատարագը մատուցուեցաւ ի Սուրբ Յարութիւն:
Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ.
Շէրպէթեան:

Եր. 15 Մայիս.- Ս. Պատարագը
մատուցուեցաւ ի Սուրբ Գլխադիր: Ժամարարն էր
Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

Կիր. 16 Մայիս.- Տօն Երեւման Սրբոյ
Խաչին: Առաւօտեան ժամերգութեան ընթացքին
Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան
կարդաց Սուրբ Կիրիլի բուրբը եւ ապա նախագահեց
"Անդաստան"ին: Սուրբ Պատարագը մատուցուեցաւ
Մայր Տաճարի Աւագ Խորանին վրայ: Ժամարարն
էր Աւետիս Աբեղայ Իփրանեան: Խորանին վրայ
դրուած էր խաչի նշանը՝ վառ կանթեղներով:

Եր. 22 Մայիս.- Ս. Պատարագը
մատուցուեցաւ ի Սուրբ Յակոբ: Ժամարարն էր
Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կիր. 23 Մայիս.- Ս. Պատարագը

մատուցուեցաւ ի Սուրբ Յարութիւն: Ժամարարն էր Հոգշ. Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Ջղջանեան:

Դշ. 26 Մայիս.- Կէսօրէ ետք, Գերշ. Տ. Սեւան Եպս. Դարիպեանի գլխաւորութեամբ, Միաբան հայրեր ինքնաշարժեքով բարձրացան Ջիթենեաց լեռ, ուր Համբարձման Սրբավայրին վրայ կառուցուած մեր վրամամատրան մէջ պաշտուեցան ժամերգութիւն եւ նախատօնակ:

Իրիկնադէմին ժամը 6.30ին պաշտուեցաւ Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւն, որ աւարտեցաւ 8.15ին:

Եշ. 27 Մայիս.- Համբարձում Տեառն: Առաւօտուն Գերշ. Տ. Սեւան Եպս. Դարիպեանի գլխաւորութեամբ, Միաբան հայրեր դարձեալ ինքնաշարժեքով բարձրացան Ջիթենեաց լեռ ու "Հրաշափառ" ով մուտք գործեցին: Մեր վրամամատրան մէջ Սուրբ Պատարագ մատոյց եւ քարոզեց հանդիսապետ Սրբազանը: Մայր Աթոռոյ Սիւն Սուրբ Էջմիածին փոխադրութեան տարեդարձի Մաղթանքին նախագահեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը, իսկ "Անդաստան" ին նախագահեց պատարագիչ Սրբազանը:

Շք. 29 Մայիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի տանիքի Ս. Համբարձման մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Բագրատ Արդ. Պարեմեան:

- Կէսօրէ ետք ժամերգութիւնը եւ նախատօնակը պաշտուեցաւ ի Սուրբ Հրեշտակապետաց Եկեղեցին: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Յուսիկ Եպս. Պաղտասեան:

Կիր. 30 Մայիս.- Երկրորդ Ծաղկազարդ: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ եւ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց Եկեղեցին: "Անդաստանին" հանդիսապետն էր Գերշ. Տ. Յուսիկ Եպս. Պաղտասեան: Ժամարարն էր Հոգշ. Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան, որ նաեւ քարոզեց:

Շք. 5 Յունիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի տանիքին վրայ գտնուող Ս. Առաքելոց մատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէճեան:

- Կէսօրէ ետք, Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը նախագահեց Մայր Տաճարի մէջ պաշտուած Հոգեգալստեան հանդիսաւոր նախատօնակին:

- Իրիկնադէմին, ի Սուրբ Յակոբ պաշտուած "Եկեղեցի" ի եւ հսկման կարգերուն նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Կիր. 6 Յունիս.- Հոգեգալուստ (Պենտեկոստէ) եւ Բարեկենդան Եղիական Պահոց: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ

Սեղանին վրայ մատոյց Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան: "Հոգի Աստուծոյ" երգէն առաջ, պատարագիչ Սրբազանը Աւագ Խորանին վրայէն կարդաց Յովհաննու Ոսկեքերանի Հոգեգալստեան ներքողի մէկ մասը:

- Կէսօրէ ետք, ժամերգութիւնը պաշտուեցաւ Սիոնի վերջին ընթրեաց վերնամատրան մէջ, գլխաւորութեամբ Գերշ. Տ. Յուսիկ Եպս. Պաղտասեանի:

Ապա բոլորը ուղղուեցան Ս. Փրկչի վանքը, որուն գաւթին մէջ հոգեհանգստեան կարգ կատարուեցաւ հանգուցեալ Պատրիարքաց, եւ Միաբանից հոգիներուն համար:

Շք. 12 Յունիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Սուրբ Գլխադիր, ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան: Ապա կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան ցկեանս նախագահ Տիար Ալեք Մանուկեանի կողակից Տիկին Մարի Մանուկեանի մահուան քառասունօրին առթիւ: Նախագահեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը:

Կիր. 13 Յունիս.- Յիշատակ Եղիայի Մարգարէին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Յուսիկ Եպս. Պաղտասեան: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պողոսեան:

- Երեկոյեան ժամերգութիւնը եւ նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Սեւան Եպս. Դարիպեան:

Բշ. 14 Յունիս.- Սուրբ Կուսմանցն Հոփսիմեանց: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց Եկեղեցոյ մէջ, իսկ Ս. Պատարագը Հոփսիմէի խորանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Աւետիս Արդ. Իփրաճեան:

Ուրբաթ 18 Յունիս.- Ս. Գրիգոր Լուսաւորչի Ելն ի Վիրապէն նախատօնակին նախագահեց Գերշ. Տ. Յուսիկ Եպս. Պաղտասեան:

Շք. 19 Յունիս.- Ս. Գրիգոր Լուսաւորչի (Ելն ի Վիրապէն): Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի արանդատան՝ Ս. Լուսաւորչի սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Այնանեան:

- Կէսօրէ ետք Մայր Տաճարին մէջ պաշտուած նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը: Համբարձիւն ետք ծնրադիր "Տէր Ողորմեա" երգուեցաւ:

Կիր. 20 Յունիս.- Տօն Կարօղիկէ Եկեղեցոյ Ս. Էջմիածնի: Առաւօտեան ժամերգութեան ժամանակ կատարուեցաւ "Անդաստան", հանդիսա-

պետն էր Գերշ. Տ. Սեւան Եպս. Ղարիպեան: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց եւ քարոզեց Հոգշ. Տ. Անուշաւան Մ. Վրդ. Ջղջանեան: Ամենապատիւ Պատրիարք Արքայազան Հայրը նախագահեց "Հայրապետական Մաղթանք"ի արարողութեան:

Շր. 26 Յունիս.- Ս. Մեծին Ներսիսի եւ Ռադայ Եպիսկոպոսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կիր 27 Յունիս.- Բարեկենդան Ս. Լուսաւորչի Պահոց: Սուրբ Պատարագը մատուցուեցաւ ի Սուրբ Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Սեւան Եպս. Ղարիպեան: Ժամարարն էր Հոգշ. Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Բշ. Մարտ 22.- Իսրայէլի Յունաց Ընդհանուր Գոծնուլը Միմայլ Գամպանիս, Պատրիարք Արքայազան Հօր այցելութեան եկաւ, պաշտօնով երկրէն հեռանալուն եւ Պրուֆէլ փոխադրուելուն առիթով:

Դշ. Մարտ 24.- Պատրիարք Արքայազան Հայրը, Մեծ Պահոց Միջինքին առիթով Միաբանութեան անդամներուն հետ մտերմիկ ընթրիքի երեկոյթ մը ունեցաւ Պատրիարքարանին մէջ:

Եշ. Մարտ 25.- Յունաց Ազգ. Անկախութեան տարեդարձին առիթով Յունաց Հիւպատոսի կազմակերպած ընդունելութեան, Նէշընըլ Փալըս պանդոկի մէջ, ներկայ գտնուեցաւ Պատրիարք Արքայազանը, ընկերակցութեամբ Դաւիթ եւ Յուսիկ Արքայազաններու եւ Ռազմիկ Վրդ. Պողոսեանի:

Դշ. Մարտ 31.- Իսլամաց նոր նշանակուած դատախազին եւ իմամին շնորհաւորութեան այցելութիւն տուաւ Պատրիարք Արքայազան Հայրը, ընկերակցութեամբ Գեր. Տ. Սեւան Եպս. Ղարիպեանի եւ Աւագ Թարգման Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պողոսեանի:

Եշ. Ապրիլ 1.- Պատրիարք Արքայազան Հօր հետ տեսակցութիւն ունեցան որոշ թիւով անդամներ Հրեայ եւ Քրիստոնեայ ինքըրֆէյթի ընկերակցութեան, հետաքրքրուած Հայ Եկեղեցւոյ եւ ժողովուրդի պատմութեամբ եւ աւանդութիւններով:

Ռւր. Ապրիլ 9.- Աւագ Ուրբաթ (Եւրոպացոց): Կէսօրին, Պատրիարք Արքայազան Հօր հետ հանդիպում ունեցան Հոռմի Փօնթիֆիլը Օրիէնթըլ վարժարանէն 50 (յիսուն) աստուածաբանական ուսանողներ, տարբեր երկիրներէ, ձեռնադրեալ եւ ոչ-ձեռնադրեալ, եւ մայրապետներ, իրենց դասատու եւ ղեկավար Հայր Ռիչըրտ Մաֆօպֆիի

առաջնորդութեամբ: Ապա՝ խումբը այցելեց Ս. Յակոբեանց Մայր Տաճարը, ուր Լուսարարապետ Գեր. Տ. Դաւիթ Արք. Սահակեան բացատրութիւններ տուաւ ներկաներուն:

Գշ. Ապրիլ 13.- Գօթաբ Ռիֆայի հիւպատոս Տիկին Էլէնէ Քրէյսօ, ժամը 11.30ին այցելութիւն տուաւ Պատրիարք Արքայազան Հօր:

Դշ. Ապրիլ 14.- Պատրիարք Արքայազան Հօր հետ տեսակցութիւն ունեցան հայ ուխտաւորներ, ընդ որս Օրիկոնէն, բազում տարիներու բացակայութենէ յետոյ Տիգ Ռանեան եւ Վարդուհի Մարթօ, եւ Անի Տիգրանեան, Երուսաղէմի դաստիարակ Պր. Եղիա Տիգրանեանի եղբայրը, բոյրը եւ դուստրը: Նաեւ Նի Ճըրզիէն, Երուսաղէմ-ձին Տէր եւ Տիկին Գրիգոր եւ Արփի Արսլանեան, եւ Տիար Միսաֆ Հայկեանց, բազում տարիներով Տնօրէն վարիչը Լ. Բ. Լ. Միութեան, եւ Մարսիլիան Երուսաղէմ-ձին Տիկին Ատրիմէ Գարրիէլեան:

Ուր. Ապրիլ 16.- (Աւագ Ուրբաթ): Կէսօրին, Պատրիարք Արքայազան Հօր նախագահութեամբ, ժառանգաւորաց վարժարանի աշակերտութեան հետ, "Սիրոյ Ճաշի" հրաւիրուած էին Կոստանդնուպոլիսէն եկած 36 հոգինոց ուխտաւորներուն խումբը, առաջնորդութեամբ Պատրիարքի փոխանորդ, Գեր. Տ. Մեսրոպ Արք. Մուրաֆեանի:

Իսկ Արքոց Յակոբեանց Մայր Տաճարի մէջ Քրիստոսի Թաղման Կարգի արարողութենէն յետոյ, նոյնպէս Պատրիարք Արքայազան Հօր նախագահութեամբ, ժառանգաւորաց Վարժարանի աշակերտութեան հետ ընթրիքի հրաւիրուած էին Մարսիլիայէն եւ Նիսէն ուխտի եկած երեսուն հոգինոց խումբը, առաջնորդութեամբ Մարսիլիոյ Շրջանի Հայրապետական Պատուիրակի Փոխանորդ Գեր. Տ. Տարօն Եպս. Ճէրէնեանի:

Դշ. 21 Ապրիլ.- Առտու ժամը 11ին Պատրիարք Արքայազան Հայրը հանդիպում ունեցաւ Կաթոլիկ Եկեղեցւոյ Միջին Արեւելի Միսիոնի պատասխանատու Պրատիըր Ժօզէֆ Տանըլտի հետ եւ միասին ճաշեցին միաբանական սեղանատունը:

Բշ. 26 Ապրիլ.- Պատրիարք Արքայազան Հօր այցելութեան եկաւ Եթովպիական Հապէշ Եկեղեցւոյ Պատրիարք Տ. Տ. Փառլոս, որ ապա այցելեց նաեւ Սուրբ Յակոբ Մայր Տաճարը, Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արքեպիսկոպոսի եւ միաբան հայրերու ընկերակցութեամբ:

- Նոյն օրը հրեական Անկախութեան տօնին առթիւ Քաղաքապետին եւ Նախագահին հրաւեր ընդունելութեանց ներկայ եղան Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեան եւ Պրն. Գէորգ Հինդլեան:

- Պապական նուիրակին ի պատիւ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան եւ Գեորգ Հինգիւսեան:

Դշ. 28 Ապրիլ.- "Անի" ֆառաքի պատմական յուշարձաններու եւ եկեղեցիներու սահիկներու ցուցադրութիւն, Պրն. Թիւրքի-ի կողմէ: Նախագահեց եւ փակման խօսքը կատարեց ֆրասերէնով եւ հայերէնով լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Եշ. 29 Ապրիլ.- Պատրիարք Սրբազան Հօր ֆառաքէն բացակայութեան պատճառով, Յունաց Պատրիարքի հրաւերին, Համբարձման Լերան իր քնակարանին մէջ, ներկայ գտնուեցաւ Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Դշ. 26 Մայիս.- Պատրիարք Սրբազան Հօր այցելութիւն տուին Իսրայէլի Ֆրանսական Դեսպալներ, Թէլ Ավիվէն, եւ Երուսաղէմի մէջ Ֆրանսական Ընդհանուր Հիւպատոսը:

Բշ. 30 Մայիս.- Պատրիարք Սրբազան Հօր այցի եկաւ Ամերիկայի Եկեղեցիներու Խորհուրդի Միջին Արեւելի Գրասենեակի վարիչ Տէյլ Պիշըփ, Երուսաղէմի մէջ Միջին Արեւելի Եկեղեցիներու Խորհուրդի Գրասենեակի պաշտօնեաներուն հետ:

Եշ. 3 Յունիս.- Յետ միջօրէին ժամը 4ին, Իսրայէլի նորընտիր Նախագահ Ուայզման այցելեց Ս. Յարութեան Տաճարը, որուն մուտքին դիմաւորուեցաւ Յոյն եւ Հայ Պատրիարքներու եւ Ֆրասիսկեան Գուստոսի եւ Ս. Յարութեան Տաճարի տեսուչներու եւ եկեղեցականներու կողմէ:

Ամեն. Պատրիարք Սրբազանին կ'ընկերանային Դաւիթ, Կիրեղ, Սեւան, Յուսիկ եւ Վաղարշ Սրբազանները, եւ Կոմիտաս եւ Ռազմիկ վարդապետները: Նախագահին կ'ընկերանային Երուսաղէմի Քաղաքապետ Թէտի Քօլլէֆ իր օգնականներով, եւ Ոստիկանութեան եւ Ապահովութեան պատասխանատու պաշտօնեաները:

Ողջոյնի խօսքերէն յետոյ, Պատրիարքներու ներկայացուցիչներ նախագահը առաջնորդեցին Տաճարի գանազան մասերը, մինչ Յունաց Պատրիարքը եւ Ֆրանսիսկեան Մեծաւորը հիւրասիրուեցան Հայոց Տեսչարանին մէջ, մինչեւ Նախագահին հրածշտ առնելը:

Իսկ ժամը 6.30ին, Պատրիարք Սրբազան Հայրը մասնակցեցաւ Քաղաքապետ Թէտի Քօլլէֆի կազմակերպած ընդունելութեան՝ Դաւիթ Բերդին մէջ, ի պատիւ Նախագահին, ընկերակցութեամբ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեանի եւ Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեանի:

Կիր. 6 Յունիս.- Յետ միջօրէին, Պատրիարք Սրբազան Հօր այցելեց Ռօշըստըր, Նիւ Եօրքի Եպիսկոպոսական եկեղեցւոյ Եպիսկոպոսի օգնական

Ռօպերթ Մարքինըր, իր խումբին հետ, որ նախապէս ժամադրութիւն խնդրած էր մեր միաբան եղբայրներէն եւ Ռօշըստըրի եւ շրջակայքի հոգեւոր հովիւ Հոգ. Տ. Գեղամ Մ.Վրդ. Ջաֆարեանի միջոցաւ:

Բշ. 7 Յունիս.- "Ս. Երրորդութիւն" Ռուսաց Մայր Տաճարին մէջ մատուցուած Սուրբ Պատարագի եւ ապա ընդունելութեան ներկայ գտնուեցան Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան եւ Գերշ. Տ. Սեւան Եպս. Լարիպեան:

Դշ. 8 Յունիս.- Պատրիարք Սրբազան Հօր հետ տեսակցութիւն ունեցան Շուէտի եկեղեցիներու խորհուրդի Ընդհանուր Վարիչին ընկերացող եւ Լուսերական եկեղեցիներու առաջնորդներ Ճարնէն, Հնդկաստանէն, Ջայիրէն, Քենիայէն եւ Հարաւային Ամերիկայէն:

- Նոյն օրը յետ միջօրէին, Իտալական Հիւպատոսարանի կազմակերպած ընդունելութեան մասնակցեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Գեր. Տ. Դաւիթ Արք. Սահակեանի եւ Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեանի:

Եշ. 10 Յունիս.- Քաղաքապետարանի Սրահին մէջ Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախկին Արտաքին Գործոց Նախարար Ճօրն Շուլցի "Երուսաղէմի պատուոյ ֆաղափարութեան" նշանի ստացման առթիւ ներկայ գտնուեցան Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. եւ Գերշ. Տ. Սեւան Եպիսկոպոս:

Բշ. 14 Յունիս.- Անգլիոյ քաղաքիին Մենդեան տարեդարձին առիթով, Անգլիական Հիւպատոսարանի կազմակերպած ընդունելութեան մասնակցեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Գեր. Տ. Դաւիթ Արք. Եպիսկոպոսի եւ Տ. Ռազմիկ վարդապետի:

Բշ. 28 Յունիս.- Երուսաղէմի նոր Քաղաքապետարանի շէնքին բացումին առիթով, հանդիսութեան եւ յայտագրին ներկայ գտնուեցաւ Ամեն. Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Գեր. Տ. Սեւան Եպս. Լարիպեանի եւ Հոգ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեանի: Երգչախումբի, նուագախումբի, պարերու, եւ Երուսաղէմի պատմական դէպքերէն սահիկներու բացատրութեան կարգին, արտայայտուեցան Քաղաքապետ Թէտի Քօլլէֆ, նախագահ էգեր Ուայզման, եւ վարչապետ Իցհազ Ռապին: